տութիւնների պատճառով բաւական ուշ հասանք: Ճանապարհը ձգւում էր մշակոած դաշտերի, ագարակների, այգիների եւ կանաչազարդ մարգագետինների միջով: Դա բանուկ ճանապարհներից մէկն էր, որ քաղաքից տանում էր դէպի նաւահանգիստը: Խիստ յաճախ պատահում էինք խումբերով ուղեւորների, որոնք զարմացած կերպով նայում էին եւրոպացու վրայ եւ, գլուխ տալով, անցնում էին: Ճանապարհի եզերքին շատ անգամ տեսնում էինք մենաւոր մարդիկ, որ,անշարժ նստած գետնի վրայ, անխորհուրդ կերպով նայում էին անցուդարձ անողների վրայ: Նրանց մօտ ուրիշ ոչինչ չկար, բացի անբաժան չիբուխից, որ դրած էր նրանց կշտին: Այդ անգործ, ծոյլ, անանպատակ մարդիկը ժամերով այդպէս անշարժ կը նստեն եւ կը նայեն, ինչի՞ համար, իրանք եւս չգիտեն: Եւրոպացու երեւոյթը խռովում էր եւ նրանց հանգստութիւնը. նրանք եւս ոտքի էին կանգնում, խոնարհութեամբ գլուխ էին տալիս, եւ երբ մենք անցնում էինք, դարձեալ նստում էին ու նայում:

Մեզ պատահեց քուրդի քարաւան: Դա յիշեցնում էր հովիւ ժողովրդի այն խորին, նախնական դրութիւնը, երբ բոլոր չորքոտանիներից ընտանիայցրել էր նա կովին ու եզին միայն: Քարաւանի ամբողջ գրաստները եզներ էին: Քուրդը նրանց վրայ բարձել էր այն մթերքները, որ գնել էր քաղաքից. նրանց վրայ նստացրել էր եւ իր կնոջը, մի երեխայ գրկումը, մէկն էլ ետեւում, մօր մէջքին կպած: Քարաւանը դիմում էր դէպի նաւահանգիստը: Առանց սանձի, առանց համետի, հլու եւ հնազանդ անասունները, դանդաղկոտ քայլերով, տանում էին իրանց ծանրութիւնները: Մտրակի կարօտ չէին նրանք, նրանց կառավարում էր տիրոջ ձայնը: Ճանապարհի ամբողջ լայնութիւնը, երկար տարածութեան վրայ, լցուած էր այդ խառնիճաղանջ բազմութեամբ: Քայց երբ մենք մօտեցանք, քարաւանը իսկոյն երկու մասն բաժանուեցաւ, մեզ ճանապարհ տոին, մենք մէջտեղից անցանք: Եւրոպացուն հանդիպելը գռեհիկ քուրդի մէջ անգամ մեծարանք էր ազդում:

Իսքալե-կափուսից անցնելով, շուտով մենք հասանք այն նշանաւոր տեղը, ուր ճանապարհի մի կողմում մենք տեսանք ահագին մեծահատոր քարեր, որ կարծես հսկաների ձեռքով շարուած լինէին միմեանց վրայ: Քարերի ծերպերից վազում էին պարզ, սառն աղբիւրներ, եւ մամուռը իր կանաչ թաւիշով պատել էր հին արհեստագործութեան հրէշաւոր կերպարանքը:

Վանէցի հայերի աւանդութիւնը յիշեալ քարերի մասին հրաշքներ է պատմում. դրանց վերաբերում է այն ժամանակներին, երբ մարդիկ այժմեան նման փոքրիկներ չէին, այլ հսկաներ էին: Նրանք պատերազմում էին դեւերի եւ վիշապների հետ, եւ ահագին քարաժայռը, թեթեւ գնդակի նման, նետում էին դէպի թշնամին: Յիշեալ քարերի կառուցումը եւ նրանց շինուած-